ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE7B-737F-4FD2-9DC9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1534/02/26 ք. Երևան
18 Մայիսի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/1534/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Էկովիլ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Արսեն Անտանոսյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ հայցելով

1) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 08.09.2025 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԲԿԳԿԲՄԱԾՁԲ-25/46» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.01.2026թ. կազմված թիվ 4 արձանագրու-թյամբ գնման ընթացակարգի շրջանակներում հաղթող մասնակցի հետ պայմանագիր չկնքելու և ընթացակարգը չկայացած

հայտարարելու մասին կայացված որոշումը ճանաչել անվավեր:
2) Որպես հետևանք՝ պարտավորեցնել թիվ «ԲԿԳԿ-ԲՄԱԾՁԲ-25/46» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «ԷկոՎիլ» ՍՊ ընկերությանը որոշել որպես գնման ընթացակարգի ընտրված մասնակից:
Կայացնել պայմանագիր կնքելու մասին որոշում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի հիման վրա ընտրված մասնակցին ներկայաց-նելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:
Դատարանը 19.02.2026թ.-ին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը հայցադիմումը կրկին 24.02.2026թ.-ին ներկայացրել է դատարան:
Դատարանը 26.02.2026թ.-ին կայացրել է որոշում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին:
Դատարանի որոշման դեմ Հայցվորի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 02.04.2026թ.-ին կայացրել է որոշում հետևյալ բովանդակությամբ՝ «1. Վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/1534/02/26 քաղաքացիական գործով 26.02.2026 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը վերացնել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված (...):
Քաղաքացիական գործին դատավորի աշխատակազմը հասանելիություն է ստացել 14.05.2026թ.-ին:
ՔԴՕ 127-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:
Դատարանն արձանագրում է, որ բացակայում են ՔԴՕ 126-րդ հոդվածով սահմանված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ նաև, որ ներկայացված հայցը ենթակա է քննության ՔԴՕ 27.2 գլխի կանոններով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 16.06.2026 թվականին:
2. Պատասխանող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Ստորագրող

ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ

2908790114

Դատավոր՝ Դանիել Մխեյան

2026-05-18 15:30:33 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am